Արձանագրություն N 2

<<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/10>> ծածկագրով շրջանակային համաձայնագրով իրականացվող ընթացակարգի գնահատողի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 26 սեպտեմբերի 2016թ.
Ժամը՝ 14:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ռ. Խոջայան /գնահատող/
Հանձնաժողովի անդամներ՝ Տ. Վասիլյան /գնահատող/ Ն. Քեռյան /գնահատող/,
Շ. Իսախանյան /բացող/ Ա. Աշուղյան /բացող/,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Համբարձումյան

1. Տեղեկություններ <<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/10>> ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

(Ռ. Խոջայան)

Հայտերը բացվել են ՀՀ ՔՆ <<Քաղաքաշինական ԾԻԳ>> պետական հիմնարկի վարչական շենքում, 2016 թվականի սեպտեմբերի 26-ին ժամը 14:30-ին, որը համընկել է հայտերի ներկայացման վերջնաժամկետին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. <<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-16/10>> ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ռ. Խոջայան)

Ընդունել ի գիտություն, որ էլեկտրոնային համակարգով շրջանակային համաձայնագրերի միջոցով իրականացվող ընթացակարգին առգիծ հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակցի անվանումը
1	<<Կոմպմարկետ>> ՍՊԸ
2	<<ԷԼԿՈՄՊ>> ՍՊԸ
3	<<ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ
4	<<ՍԵԳ>> ՍՊԸ
5	<<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ
6	<<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3.Բացված յուրաքանչյուր էլեկտրոնային փաթեթում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին

(Ռ. Խոջայան)

3.1 Բոլոր մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային փաթեթներում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,

3.2 <<ՋԻ ԷՅ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի, <<ԷԼԿՈՄՊ>> ՍՊԸ-ի և <<Կոմպմարկետ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին,

3.3 <<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում, այդ թվում գնային առաջարկում, նշված է <<Պատրոն ՌՄ ՍՊԸ տնօրեն Կ. Սուքիասյան>>, սակայն փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրմամբ հաստատված է այլ անձի կողմից, մինչդեռ վերջինիս նման լիազորություն վերապահելու մասին ներկայացված լիազորագրով <<ՔՆՔԾԻԳ-ՇՀԱՊՁԲ-

16/10>> ծածկագրով ընթացակարգի փաստաթղթերը ստորագրելու լիազորություն վերապահված չէ /լիազորագիրը տրված է այլ ընթացակարգի շրջանակներում փաստաթղթեր ստորագրելու համար/,

3.4 <<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում, այդ թվում գնային առաջարկում, նշված է <<Էդվարդ Քոմփյութերս ՍՊԸ տնօրեն Ա. Մխիթարյան>>, սակայն փաստաթղթերը էլեկտրոնային թվային ստորագրմամբ հաստատված է այլ անձի կողմից, մինչդեռ ներկայացված չէ վերջինիս նման լիազորություն վերապահելու մասին լիազորագիր,

3.5 <<ՍԵԳ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը, այդ թվում գնային առաջարկը , հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ռ. Խոջայան)

2.1 Մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկները.

Մնուցման մարտկոց					
Մասնակցի անվանումը	Առաջարկած գինը				
	Ինքնարժեք	Շահույթ	Առանց ԱԱՀ	ԱԱՀ	Ընդհանուր
<<Կոմպմարկետ>> ՍՊԸ	44000	6000	50000	10000	60000
<<Պատրոն ՌՄ>> ՍՊԸ	49500	5500	55000	11000	66000
<<ՋԻ Է3 ԳՐՈՒՊ>> ՍՊԸ	57150	6350	63500		63500
<<Էդվարդ Քոմփյութերս>> ՍՊԸ	57747	6420	64167	12833	77000
<<ԷԼԿՈՄՊ>> ՍՊԸ	58333	5833	64166	12834	77000
<<ՍԵԳ>> ՍՊԸ	72000	8000			80000

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

5. Ապրանքի մատակարարին ծանուցելու մասին

(Ռ. Խոջայան)

Հաշվի առնելով, որ գնումն իրականացվել է ՀՀ կառավարության գնումների գործընթացի կազմակերպման մասին N 168-Ն որոշման 84-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն <<ապրանքների գնման դեպքում պայմանագրով (նախագծով) սահմանվում է, որ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը պատվիրատուն օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սույն կարգով սահմանված պահանջներով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով պատվիրատուն մեկ աշխատանքային օրվա ընթացքում պայմանագիր կնքած անձին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և

կնքվելիք պայմանագրի փոփոխության նախագիծը: Եթե մասնակիցը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի փոփոխությունը, ապա այդ մասով պատվիրատուն ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է նախկինում կնքված պայմանագիրը՝ առանց պայմանագրի կողմի նկատմամբ պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման>> և սույն ընթացակարգի շրջանակներում ներկայացվել է պայմանագրով սահմանված գնից ցածր գնային առաջարկ /պայմանագրով սահմանված միավորի գինն է 6600 (Վեց հազար վեց հարյուր) ՀՀ դրամ/՝ հանձնաժողովը որոշեց ծանուցել պայմանագիր կնքած անձին՝ ներկայացնելու ապրանքը սույն ընթացակարգի շրջանակներում ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

6. Հանձնաժողովի նիստերի անցկացման ժամանակացույցը հաստատելու մասին

(Ռ. Խոջայան)

Հաստատել հանձնաժողովի նիստերի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

- Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել 30.09.2016թ., ժամը 10:00-ին, ՀՀ Քաղաքաշինության նախարարության <<Քաղաքաշինական ԾԻԳ>> պետական հիմնարկ, իրավաբանական և գնումների կազմակերպման բաժին, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Ռ. Խոջայան

Անդամ՝ ---------- Տ. Վասիլյան

---------- Ն. Քեոյան

---------- Շ. Իսախանյան

---------- Ա. Աշուղյան

Քարտուղար ---------- Ա. Համբարձումյան